EIFL- ի տեղեկատվական նշում

Մարաքեշի պայմանագիրը ընթերցանության ֆունկցիայի դժվարություն ունեցող անձանց համար ունի ուղիղ ազդեցություն Հայաստանում

Հայաստանի Հանրապետությունը 2022թ.-ին միացել է «Կույրերի, տեսողությունից հաշմանդամ կամ ընթերցանության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագրին: Թեև «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի օրենքը (2006թ.) չի փոփոխվել համաձայն Պայմանագրի, այնուամենայնիվ, Հայաստանի գրադարանները կարող են պատրաստել և տրամադրել մատչելի ձևաչափով պատճեններ ընթերցողության ֆունկցիայի դժվարություն ունեցող անձանց:

Դա պայմանավորված է նրանով, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ[1] Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերն ունեն անմիջական ազդեցություն: Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ խորհրդարանի կողմից ընդունված օրենքների և Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրի միջև հակասություն առաջանալու դեպքում կիրառվում են Պայմանագրի նորմերը: Այսպիսով, հեղինակային իրավունքի մասին օրենքի կողմից հեղինակներին տրված բացառիկ իրավունքները պետք է ենթարկվեն Մարաքեշի պայմանագրով պահանջվող բացառություններին[2]:

---

[1] https://www.wipo.int/wipolex/en/legislation/details/16747

[2] Նմանապես Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացված կամ Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից հաստատված միջազգային պայմանագրերն ունեն իրավական ուժ. դրանք վավերացնող կամ հաստատող մարմնի իրավական ակտի համաձայն[...]. Եթե Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից հաստատված միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են այլ իրավական ակտերով, ապա կիրառվում են հաստատված պայմանագրերի նորմերը:»: Հոդված 21, խմբագրվել է 2006թ. դեկտեմբերի 25-ի ՀՕ-35-Ն-ի կողմից: Տես նաև Mher Arshakyan," *Universal Jurisdiction: A Primer with a Note on Armenia", https://law.aua.am/universal-jurisdiction-a-primer-with-a-note-on-armenia/*

Մարաքեշի պայմանագիրը բավականաչափ մանրամասն է՝ Հայաստանի գրադարաններին թույլատրելի գործառույթների վերաբերյալ ուղեցույց տրամադրելու համար:

Հոդված **2**-ը պարունակում է Պայմանագրի գործողության շրջանակում գտնվող ստեղծագործությունների սահմանումներ, մատչելի ձևաչափի պատճեններ, որոնք Պայմանագիրը թույլ է տալիս պատրաստել և տարածել, և Պայմանագրով լիազորված սուբյեկտներին՝ մատչելի ձևաչափով պատճեններ պատրաստելու համար (որը ներառում է գրադարաններ, որոնք ծառայություններ են մատուցում ընթերցանության ֆունկցիայի դժվարություն ունեցող անձանց):

Հոդված **3**-ը սահմանում է ընթերցանության ֆունկցիայի դժվարություն անձանց շրջանակը, որոնք կարող են ստանալ լիազորված անձանց կողմից պատրաստված մատչելի ձևաչափի պատճենները:

Հոդված **4**-ը նախատեսում է, որ լիազորված մարմիններին պետք է թույլատրվի պատրաստել մատչելի ձևաչափի պատճեններ և դրանք հասանելի դարձնել ընթերցանության ֆունկցիայի դժվարություն ունեցող անձանց:

Հոդված **5**-ը թույլատրում է մատչելի ձևաչափով պատճենների արտահանումը, իսկ 6-րդ հոդվածը թույլատրում է մատչելի ձևաչափով պատճենների ներմուծումը:

Համապատասխանաբար, համաձայն պայմանագրի, Հայաստանի գրադարանները կարող են սկսել հրատարակել և տրամադրել մատչելի ձևաչափի պատճեններ ընթերցանության ֆունկցիայի դժվարություն ունեցող անձանց համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար, թե ինչ գործունեություններ են թույլատրվում, գրադարանները պետք է հոում կատարեն Պայմանագրի տեքստին, ինչպես նաև EIFL-ի Getting Started ուղեցույցին, որը բացատրում է Պայմանագրի դրույթները:

Թեև գրադարանները կարող են սկսել այս գործունեությունները առանց Հայաստանի հեղինակային իրավունքի մասին ակտում հատուկ փոփոխության ընդունման, գրադարանները ներկայացնող կազմակերպությունները և ընթերցանության ֆունկցիայի դժվարություն ունեցող անձինք պետք է մտածեն հատուկ փոփոխության առաջարկելու մասին:

Սա հնարավորություն կտա մշակել մի մոտեցում, որը հարմարեցված է բացառապես Հայաստանին, և գրադարաններին ու այլ կազմակերպություններին, որոնք ծառայություններ են մատուցում ընթերցանության ֆունկցիայի դժվարություն ունեցող անձանց, լրացուցիչ հարմարավետություն ապահովել մատչելի ձևաչափով պատճեններ պատրաստելիս և տրամադրելիս:

հոկտեմբեր, 2023

Հրաժարում: Այս փաստաթղթում ներկայացված տեղեկատվությունը իրավաբանական խորհրդատվություն չի հանդիսանում: EIFL-ը հրաժարվում է նման տեղեկատվության առնչությամբ ողջ պատասխանատվությունից: Եթե կասկածներ ունեք, դիմեք տեղական իրավաբանական խորհրդատվություն: